

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Առողջապահության նախարարության քաղաքացիական ծառայության
հեղկյալ ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային
պայմանագրով զբաղեցնելու համար**

**պետական առողջապահական գործակալության առողջապահական և
ֆինանսական ցուցանիշների ծրագրավորման, հոսքերի կառավարման և վերլուծության
բաժնի գլխավոր ֆինանսիստի (ծածկագիրը՝ 11-34.2-Մ2-2)**

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

• Տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

Պահանջվում է հեղկյալ իրավական ակտերի իմացություն.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն,

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» N 420-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի «Սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 28-ի N 517 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 806-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Սոցիալական փաթեթի շահառուների, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով առողջության առաջնային պահպանման և նեղ մասնագիտական ծառայություններ իրականացնող կազմակերպությունների աշխատողների՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգը, նրանց՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների փաթեթը, փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանների ձեւավորման ու վարման կարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ապահովագրության ծառայություններ մատուցող ընկերությունների միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 375-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշում:

Բաժնի գլխավոր ֆինանսիստը՝

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների հետ պետական պատվերի շրջանակներում բնակչությանը բժշկական ծառայությունների մատուցման մասին տարեկան պայմանագրային գումարների հաշվարկման ու դրանցում տարվա ընթացքում կատարվող փոփոխությունների հետ կապված աշխատանքներ.
- իրականացնում է բյուջեների կատարման կարգը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ֆինանսավորման ամսական չափաքանակների հաշվարկման աշխատանքներ.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծրագրերի ծախսերի ձևավորման, բժշկական օգնության և սպասարկման տեսակների, գների և նորմատիվների ձևավորման աշխատանքներ.
- իրականացնում է անհրաժեշտ ֆինանսական ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և դրանց հիման վրա վերլուծության իրականացման աշխատանքներ.
- իրականացնում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների մշտադիտարկման, դիտարկման, ունենասիրությունների, վերլուծության և գնահատման աշխատանքներ.
- ընդունում է քաղաքացիների և կազմակերպությունների գրությունները, դիմումները, դիմում- բողոքները.
- իրականացում է սոցիալական փաթեթի շահառուների յուրաքանչյուր ապահովագրական կազմակերպությունների կողմից սպասարկող շահառուների չափաքանակների և պայմանագրային գումարների հաշվարկը.
- իրականացում է առողջապահության ոլորտում առկա բացերի օրենսդրական կարգավորում, առողջապահության բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հանձնարարականով տրվող աշխատանքներ: Նախագծերի օրենսդրությանը անհամապատասխանության բացահայտում: Կատարում է առողջապահության բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հանձնարարականով տրվող աշխատանքները.
- իրականացում է բնակչության առողջության ապահովագրության ներդրմանն ուղղված նախապատրաստական աշխատանքները:

Առողջապահության նախարարությունը պաշտոնակատարին վճարում է ամենամյա աշխատավարձ՝

երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը (212309)

դրամի չափով:

- **Ընտրություն կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն, ինքնակենսագրականների ուսումնասիրություն, հարցազրույց:**

Դիմող ՀՀ քաղաքացիները առողջապահության նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայական/ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
- արական սեռի անձիք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- անձնագրի պատճենը /առաջին և գրանցման էջերով/.
- ինքնակենսագրություն..

Անձանց հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը գործում է մինչև թափուր պաշտոնը մրցույթի արդյունքով պաշտոնի համալրումը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 13:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 16.09.2019թ.

Դիմումները ներկայացնել անձամբ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել՝

Ք.Երևան, Առողջապահության նախարարություն

Կառավարական տուն N3, սենյակ 211, հեռ. 060-80-80-03(1502)